

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ա- ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ

5) Ի՞նչ ըրին առաքեալները Յիսուսի յարութենէն ետք:

Հետեւելով Տիրոջ պատգամներուն առաքեալները ամէն տեղ կը քարոզէին Քրիստոսով աւետարանած փրկութիւնը եւ հաւատացեալները կը մկրտէին։ Առաջին հաւաքական մկրտութիւնը տեղի ունեցաւ Հոգեգալուստին, երբ հոգին կրակէ լեզուներու տեսքով իջաւ առաքեալներուն վրայ։ Երբ այդ օրը Ս. Պետրոսի քարոզէն վերջ մարդիկ իրեն հարցուցին, թէ ի՞նչ կ'ընեն փրկուելու համար, առաքեալը անվարան պատասխանեց։ «Ապաշխարեցէք եւ ձեզմէ իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուսի անունով մեղքերու թողութեան համար» (Գործք 2:38)։ Այն ատեն Քրիստոսի եկեղեցւոյ անդամակցեցան շուրջ 3000 հոգի (Գործք 2:41)։ Այնուհետեւ Ս. Փիլիպպոսը մկրտեց կանդակա թագուհին ներքինին (Գործք 8:38), Ս. Պետրոսը՝ կոռնելիոս հարիւրապետին ընտանիքը եւ ուրիշներ (Գործք 10...47-48), Ս. Պողոսը՝ Լիդիայի (Գործք 16:15), բանտապանին՝ իր ընտանիքով (Գործք 16:33), Կրիստոսի՝ իր ամբողջ տունով եւ շատ մը կորնթացիներու հետ (Գործք 18:8), միքանի աշակերտներու՝ Եփեսոսի մէջ, որոնք նախապէս մկրտուած էին Ս. Յովհաննէս Մկրտիչի կողմէ (Գործք 19:5-6):


ԱՊԱՆԴԱՐԱՎԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

ԲԱՍՏԵԼԱՎԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՍ ՊԱՏԱՍԽԱՆԸ 5-ՄՄՐԴ ԵՒ ՀՈԳԻՆ

Եթէ չկայ հոգի մը, որ մահուան ատեն «Աստուծոյ կը դառնայ», ի՞նչ էր որ պիտի «ընդուներ» Աստուծած Ստեփանոսի նահատակութեան ժամանակ։ Մինչդեռ Աստուծաշունչը կ'ուսուցածէ, թէ բոլոր մարդոց հոգիները երկինքի մէջ են։ Իսկ խօսքը մասնաւրելով՝ Քրիստոսով փրկուած եւ իրեն միացած հոգիներուն կ'ըսէ, թէ անոնք Երկնաւոր Երուսաղէմի մէջ են, Աստուծոյ մօտ։ «Դուք մօտ եղեք իւ Սիոն լերան, եւ կենդանի Աստուծոյ բաղադին, Երկնաւոր Երուսաղէմի եւ բիւրաւոր հրեշտակներուն եւ Երկինքը գրուած անդրանիկներու հանդիսաւոր ժողովին ու եկեղեցին եւ Աստուծոյ, որ ամենուն դատաւորն է. եւ Ա.ՐԴ.Ա.ՐՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ՝ որոնք կատարուեր են» (Եթք. 12:22-23)։ Քրիստոս, խաչին վրայ իր մահուրնէ ետք, գնաց իր խաչին յաղթանակը մեղեններուն ալ հոչակելու, ինչպէս կ'ըսէ Աստուծաշունչը։ «Քրիստոս մեղքի համար մէկ անգամ չարչարուեցաւ. արդարը՝ անարդարներուն համար, որպէսզի մեզ Աստուծոյ մօտեցնէ, որ թէեւ մեռաւ մարմինով, բայց կենդանի եղաւ հոգինով։

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ թերքը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօտ։ Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտուել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար։

ՀԱՍՑԵՏ.



ԲՈՒ ԽՈՍՔ ԻՄ ՈՅԵՐՈՒՄ ՑՐԱԳ Է ՈՒ ԻՄ ԾԱՌՈՒԵՐՈՒՄ ԼՈՅ
(Ս. 119.105)

ԺԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 6 ՄԱՅԻՆ 2018

ԹԻՒ 18

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱԿԱՆ ԸՆԹԵՐՁՈՒՄՆԵՐ

ԳՐԸ. 20.17-38 Ա. ՅԻ 3.2-6

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒՏԱՐԱՎԱՆԸ ԸՆՍ ՅՈՎՐԱՆՈՒ 9.39-10.10

Յիսուս ըսաւ. «Աշխարհ եկայ յայտնելու, թէ որո՞նք են կոյրերը եւ որոնք՝ տեսնողները. որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք որ կը տեսնեն՝ կուրճան»։

Փարիսեցիներէն ոմանք, որոնք իր շուրջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին. «Արդեօք մէ՞նք ալ կոյր ենք»։

Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ կոյր ըլլայիք, մեղք պիտի չունենայիք. բայց քանի կ'ըսէք թէ կը տեսնէք կը նշանակէ, թէ ձեր մեղաւոր ըլլալը կը հաստատէք։ Հաստատ գիտցէք ան, որ ոչխարներուն փարախը դռնէն չի մտներ, այլ ուրիշ տեղէ կը մազցի, անիկա գող է եւ աւազակ։ Իսկ ան, որ դռնէն կը մտնէ՝ անիկա ոչխարներուն հովին է։ Դռնապանը դուրս կը բանայ անոր եւ ոչխարները իր ծայնին կը հետեւին։ Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք։ Եւ երբ իր ոչխարները դուրս կը հանէ, ինք կ'առաջնորդէ եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ծայնին կը ճանչնան։ Օտարին չեն հետեւիր, ընդիակառակը կը փախչին անկէ, որովհետեւ օտարներու ծայնը չեն ճանչնար»։

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան թէ ի՞նչ ըսել կ'ուզէր իրենց։ Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց. «Հաստատ գիտցէք, թէ են են ոչխարներուն դուրս։ Բոլոր անոնք, որոնք ինձմէ առաջ եկան, գող էին եւ աւազակ, բայց ոչխարները անոնց չհետեւեցան։ Ես եմ դուրս։ Ով որ ինձմէ անցնելով մերս մտնէ՝ պիտի փրկուի, պիտի մտնէ եւ ելլէ եւ ծարակ գոնէ։ Գողը կու զայ միայն գողնալու, սպաննելու եւ փացնելու համար։ Ես եկայ՝ որպէսզի կեանք ունենամ եւ լեցուն կեանք ունենամ»։

Տէր, հեռացուր ինձմէ փառասիրութիւնը, որովհետեւ անիկա զիս կը զրկէ երկինքի փառքի ժառանգութենն։ Յեռացուր ինձմէ զահասիրութիւնը, որովհետեւ անիկա զիս կը զրկէ թեզի զահակից ըլլալու փառքն։ Յեռացուր ինձմէ դրամասիրութիւնը, որովհետեւ անիկա կը փակէ առջեւս երկինքի զանցատան դուրս։



Քրիստոս իր հրաշափառ յարութենէն 40 օր ետք երեցաւ իր աշակերտներուն՝ անոնց հետ խօսելով Աստուծոյ արքայութեան մասին:

Քառասուներորդ օրը Յիսուս պատուիրեց աշակերտներուն Երուսաղէմ մնալ մինչեւ Պետականութիւն օրը, երբ Ս. Հոգին պիտի իշնէ երկինքէն եւ բնակի անոնց մէջ:

Այնուհետեւ իր աշակերտներուն հետ Քրիստոս Զիթենեաց լեռը բարձրացաւ, ուր օրինեց զանոնք: Եւ երբ կ'օրիներ երկինք բարձրացաւ բոլորին աչքին առցեւ: Երբ տակաւին առաքեալները իրենց աչքերը երկինք յարած՝ Յիսուսի մեկնիլը կը դիտէին, ահա երկու սպիտակագեստ մարդիկ երեցան անոնց եւ ըսին.

—Ո՞վ Դալիլիացիներ, ինչո՞ւ կեցեր երկինքը կը դիտէք: Այս Յիսուսը որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր երկինք երթալը տեսաք:

Քրիստոս համբարձաւ, որպէսզի երկինքը երկրին միաւորէ եւ աստուածացնէ ու փառաւորէ մարդկային բնութիւնը:

Ան երկինք ելաւ եւ նստաւ Հօրը աշ կողմը առանց լինելու իր սիրելի առաքեալները եւ բոլոր անոնք, որոնք կը հաւատան եւ կը սիրեն զինք:

Յիսուս ըստ.

«Ես Զեար Հետ Ամ, Մրաշաւ ԱՇԽԱՌՀԻ Առաջ»:

ՅԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ

ԲԱԺԻՆ ԻՆՉ է ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ ՀԱԽԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻՆ ՄՔ

Ինչպէս որ աղօրքը կը սրբէ մեզ եւ կը մօտեցնէ Աստուծոյ, այնպէս ալ երբ մենք հաղորդուինք Փրկիչի մարմնին եւ արիւնին, կը սրբուինք եւ կը նմանին Անոր, որ մարդիկը փրկելու համար մեղքի ապականութենէն, խաչին վրայ թափեց իր մաքուր արիւնը: Եւ կը զգուշանանք մեղքերէ մտածելով, որ մեղքը կը խափանէ մեր հաղորդութիւնը Սուրբին եւ Սրբութեան հետ: Գրիգոր Տաթևի կը լսէ. «Այս խորհուրդին գործն է աւելցնել Ծնորհքը եւ դեղ ըլլալ ամենօրեայ մեղքերու» (Գրիգոր Տաթևի մանց, էջ 594): Այս է պատճառը, որ Քրիստոսի չարչարանքները պիտի յիշենք հաղորդուելով:

Իսկ Յովհաննէս Մանդակունի հայրապետը կ'ըսէ. «Անոնք, որ հաւատքով եւ երկիւղածութեամբ կը մօտենան Քրիստոսին, կը լուսաւորուին Սուրբ Հոգին եւ օրէ օր առաքինի գործերով վեր կը բարձրանան»:

ԱՌԱՎԿԱ ԳԼՈՒԽ ԺԵ. 10-12

Բարի մարդուն խրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք, որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկարեկիչ վախճան պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը:

Անուղիղ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գիտակից մարդուն ինտու:

ՆԱՍԱԿ ԱՂՋԱՏՆԵՐՈՒ ԱԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

Արդ, ո՞ւր է հարուստներու ուրախութիւնը եւ կամ անոնց մխիթարութիւնը: Ո՞վ աղքատ, որ կը ցանկաս, կը տենջաս եւ կը տիրեցնես քու հեշտ եւ խաղաղ կեանքդ, ինքզինքդ դժբախտ մը եւ թշուառակամ մը կը նկատես եւ կ'արհամարհես քու թանկագին հաստատութիւնդ: Գողերէն վախնալու կարիքը չունիս եւ ոչ ալ աւագակներէն երկիւղելու: Պէտք չունիս մտահոգուելու ո՛չ դաշտին խոտերով եւ ոչ ալ լեռներու արօտավայրերով: Պէտք չունիս հովիններու նենգութենէն վախնալու եւ ոչ ալ գաղաններու յափշտակութենէն: Պէտք չունիս բռնաւորներու բռնութիւններէն եւ ոչ ալ իշխաններու կալանքներէն դողալու: Նախանձուստները չեն նախանձիր քեզի, քասակահատները չեն խարեր քեզ, ոչ ոքէ կը վախնաս եւ ոչ ալ կ'անհանգստանաս: Իշխաններու վախը եւ տէրերու բարկութիւնը չեն կրնար սարսափեցնել աղքատը: Ոչ ոք կրնայ կողոպտել աղքատը եւ կամ նեղել զայն եւ սպառնալ անոր: Հարուստ անհանգստացած է եւ ահազանգիտակ կը գտնուի, իսկ աղքատը կը ծաղրէ զայն: Հպարտ իշխանը անբարտաւանն է հարուստին նկատմամբ, իսկ աղքատը անկարեւոր կը նկատէ զայն: Երկիրը լիցուն է գողերով եւ աւագակներով, բայց աղքատը չի վախնար անոնցմէ: Հըապարակները լիցուն են քասակահատներով եւ բռնաւորներով, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով: Դատաւորները գայլ եւ գազան դարձած են, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով, որովհետեւ չքաւորութեան պատճառաւ, իր կեանքը մեծապէս խաղաղ է, զերծ մտահոգութիւններէ, ազատ բոլորին դիմաց, առանց վախի, առանց նախանձի, առանց ոխի եւ հեռու շատ մը մոլութիւններէ:

ԻՍԱՍՏՈՒԹԵԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ Առաջ. 6

Ո՞վ երիտասարդներ, ձեր հօրը խրատը լսեցէք, մտիկ ըրէք, որպէսզի ճանչնաք իմաստութիւնը, որովհետեւ ես բարի շնորհներ պիտի պարզենամ ձեզի:

Մի՛ հեռանաք իմ օրէնքներէս, որովհետեւ ես եւս հնազանդ զաւակ է հօրս եւ սիրելի՝ մօրս աչքին, որոնք կը սորվեցնէին ինձի եւ կ'ըսէին. «Սեր խօսքերը սրտիդ մէջ տեղաւորէ, պահէ մեր պատուիրանները եւ ապրիր:

Իմաստութիւն ստացի՛ր եւ մտքով զարգացի՛ր: Մի՛ մոռնաք եւ մի՛ արհամարհեր պատգամներս, մի՛ շեղիր իմ խօսքերէս, մի՛ լրեր իմաստութիւնը: Ան պիտի պաշտպանէ քեզ: Սիրէ զայն եւ ան պիտի պահէ քեզ:

Զգաստութեան որպէս նախապայման իմաստութիւն ունեցի՛ր եւ կեանքիդ բոլոր ճանապարհներուն խոհեմ եղի՛ր:

Անով պարուրէ ինքզինքդ եւ ան պիտի բարձրացնէ քեզ: Մեծարէ զայն եւ ան քեզ իր գիրկը պիտի առնէ, որպէսզի շնորհի պասկով զարդարէ գլուխդ եւ փափկութեանը:

Որդեակ, լսէ խօսքերս եւ գործադրէ զանոնք, այն ատեն պիտի երկարին ու առատանան կեանքիդ տարիները: Ես իմաստութեան սկզբունքները կը սորվեցնէմ քեզի, կը ծանօթացնէմ ուղիղ ճամբանները, որպէսզի քալած ատենդ խոչընդոտի շահանդիպիս եւ վազած ատենդ յոգնութիւն չզգաս: